Southern California Gas Company

A Sempra Energy utility®

ՏՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԱՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Փաստեր, օգտակար խորհուրդներ և տեղեկատվություն

socalgas.com

Հետևեք մեզ: Twitter -ում և Facebook - ում

Ներածություն

Southern California Gas Company -ի մասին 2

Անվտանգության մասին տեղեկատվություն

Արտակարգ իրավիճակի դեպքում 3
Ինչպես ճանաչել գազի արտահոսքն ու արձագանքել դրան 4-5
Ինչպես անջատել գազն արտակարգ իրավիճակի դեպքում 5-6
Խողովակի անվտանգություն, և զանգահարեք նախքան փորելը 6-7
Ձեր գազի գծերի խնամքը 8
Անվտանգ հասանելիություն և չափիչին միջամտելը 9-10
Ինչպես կարդալ Ձեր չափիչը 10
Ծխահարման պահանջները 10-11
Զգուշացում շմոլ գազի վերաբերյալ 11-12
Սարքավորումների անվտանգությունը 12-13
Գազօջախների և ջեռուցիչների անվտանգությունը 13-15
Ջրատաքացուցիչի և չորացուցիչի անվտանգությունը 15-17
Բնական գազով աշխատող բուխարիների գերանները 17
Ձեղնահարկի ջերմամեկուսացման անտվանգության խորհուրդներ 17
Սարքավորումների հետկանչի մասին տեղեկատվություն 18

Խնայողության մասին խորհուրդներ

Արդյունավետության խորհուրդներ, որոնք կօգնեն Ձեզ խնայել 18-19
Ի՞նչ արժե բնական գազը 20

Գազի հաշվի մասին

Ինչպես կարդալ ամսեկան հաշիվը 21-22
Հաճախ տրվող հարցեր 23-24
Ամսեկան հաշիվը վճարելը 24
Հաշվի վճարման տարբերակներն ու մասնաճյուղերի հասցեները 25-26

Հաճախորդների օգնության ծրագրեր

Ձեղչեր և հաշվի վճարման հետ կապված օգնություն 26-27
Վճարման ժամկետի մասին հիշեցում 27

Էներգետիկ արդյունավետության և վճարի մասնակի զեղչման ծրագրեր

Ձեղչեր 27
Տնային էներգաօգտագործման հարցախույզներ 28
Կալիֆորնիայի էներգետիկական արդիականացում 28
Ֆինանսավորման հնարավորությունները 28

Այլ ծառայություններ

Արտակարգ իրավիճակներին արձագանքման շուրջօրյա գիծ 29
Ինքնասպասարկման գիծ 29
Բնակսպասարկման հերթագրումներ 29

Մեզ հետ կապը

Ինչպես կապվել մեզ հետ 30-31

SOUTHERN CALIFORNIA GAS COMPANY (SOCALGAS®) -Ի ՄԱՍԻՆ

ԱՎԵԼԻ ՔԱՆ 140 ՏԱՐԻ ՇԱՐՈՒՆԱԿ, ՄԵՆՔ ՀԱՆՁՆԱՌՈՒ ԵՆՔ ՄՆԱՑԵԼ ՄԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՄԱՔՈՒՐ, ԱՊԱՀՈՎ ԵՎ ՎՍՏԱՀԵԼԻ ԲՆԱԿԱՆ ԳԱԶ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ ԽՆԴՐԻՆ: ՏՆԱՑԻՆ ԷՆԵՐԳԱՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՑՑԻ ՆՊԱՏԱԿՆ Է ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՍԻՆ ՁԵՐ ՀԱՐՑԵՐԻՆ: ԱՅՆ ՆԵՐԱՌՈՒՄ Է ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿՕԳՆԵՆ ՁԵԶ ԳԱԶՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԵՐՊՈՎ:

Գիտեիք արդյո՞ք, որ SoCalGas-ն առաջարկում է զանազան հարմարավետ ծառայություններ ու խնայողական ծրագրեր: Ահա հիմնականները.

- Առաջիններից մեկը տեղեկացվեք խնայողական զեղչերի ու հատուկ առաջարկների մասին. պարբերաբար էլ. փոստ ստանալու համար միացեք մեր ցանկին՝ այցելելով **socalgas.com**:
- Խնայեք դրամն ու ժամանակը: Գրանցվեք՝ գազի Ձեր հաշիվը մեր ապահով կայքէջում ստանալու, դիտելու և վճարելու համար՝ այցելելով **socalgas.com**: Կարող եք նաև պատվիրել սկսել կամ դադարեցնել Ձեր գազամատակարարումը, հերթագրվել սարքավորման սպասարկման ծառայության այցին, կատարել վճարման կարգավորումներ, և ավելին:
- Եթե արդեն օգտվում եք My Account -ից, բայց վերջերս տեղափոխվել կամ փոխել եք էլ. փոստի Ձեր հասցեն, ապա խնդրում ենք անհապաղ թարմացնել Ձեր տվյալները My Account -ում:
- Բնական ռեսուրսների պահպանությունը սկսվում է տանը: Սովորեք ինչպես՝ լրացնելով էներգիայի մասին **socalgas.com**. -ում զետեղված անվճար հարցախույզը (Տես էջ 28):
- Օգտվեք էներգարդյունավետացման համապատասխան ծրագրերի շրջանակում առաջարկվող զեղչերից: Այցելեք **socalgas.com**:
- Դրամական օգնության կարիքի դեպքում առաջարկում ենք մի շարք օգտակար ծրագրեր: Տեսեք էջ 26 կամ այցելեք **socalgas.com**:
- Սովորեք բնական գազից անվտանգ օգտվելու կարգը: Կարևոր տեղեկատվության համար տեսեք 3-18 էջերը կամ այցելեք **socalgas.com**:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԴԵՊՔՈՒՄ

Պատրաստ եղեք արտակարգ իրավիճակներին և իմացեք՝ ինչպես անջատել Ձեր չափիչի գազասնուցումը (ցուցումների համար տե՛ս էջ հինգ): Երկրաշարժից հետո չափիչի գազասնուցումն անջատեք ՄԻԱՅՆ, եթե այդ անելն ապահով է և ՄԻԱՅՆ եթե գազի հոտ եք զգում, գազահոսքի ձայն եք լսում կամ նկատում եք հոսքի այլ նշաններ: Գազաչափիչներին, գազախողովակներին, փականներին, կից մասերին ու գազային զանազան այլ սարքավորումներին միշտ դիպեք զգուշությամբ: Անսարք կենցաղային տեխնիկան կամ էլեկտրալարերը կարող են պատահականորեն էլեկտրականություն սնուցել գազաչափիչին ու դրան միացված սարքերին, որոնց դիպչելը կարող է հանգեցնել էլեկտրահարման:

Նախքան արտակարգ իրավիճակը

- Իմացեք՝ որտեղ է գտնվում Ձեր գազաչափիչը, և ունեցեք 12 մատնաչափի (12″) կամ ավելի խոշոր տրամաչափի բացովի պտուտակաբանալի Ձեր վթարային պարագաների հետ՝ պահելով դրանք Ձեր շենքի ելքի կամ գազաչափիչի փականի մոտակայքում: Պտուտակաբանալին մի՛ թողեք չափիչի կամ գազախողովակի վրա:
- Որպեսզի երկրաշարժի պարագայում Ձեր ջրատաքացուցիչը չտեղաշարժվի կամ չընկնի, այն երկու տեղից՝ բաքի վերին ու ստորին մեկ երրորդի մակարդակով, ամրակապեք պատի շտիֆտներին՝ ծանր բոլտերի ու մետաղե ամրակապերի օգնությամբ: Ապահովեք, որ ստորին ամրակապն առնվազն չորս մատնաչափ վերև լինի ջերմակարգավորիչից: Գործիքների հավաքածու կարելի է ձեռք բերել կենցաղային ապրանքների՝ Ձեր տեղական խանութից, իսկ տեղադրումն առաջարկում ենք կատարել արտոնագրված որակյալ մասնագետի օգնությամբ:
- Զանգահարեք SoCalGas կամ արտոնագրված որակյալ մասնագետի՝ գազախողովակային սարքերի ցանկացած կիսակոշտ ալյումինե կամ պղնձե միակցիչները ստուգված ճկուն միակցիչներով փոխարինելու համար:
- Ստուգեք անվտանգության սարքերը, օրինակ՝ ծխի և շմոլ գազի (ածխածնի մոնօքսիդ) դետեկտորները, որպեսզի վստահ լինեք, որ դրանք սարքին են:
- Զանգահարեք SoCalGas կամ արտոնագրված որակյալ մասնագետի՝ անվտանգ շահագործման նպատակով ստուգելու Ձեր ջեռուցիչի կամ այլ գազային սարքերի աշխատանքը և անհրաժեշտության դեպքում վերանորոգում կատարելու համար: Ապահովեք, որ ճկուն միակցիչները վնասի ենթակա չլինեն և չանցնեն հարկերով, պատերով կամ առաստաղով:

Արտակարգ իրավիճակից հետո

- ՄԻ՛ անջատեք չափիչի գազասնուցումը, մինչև գազի հոտ չզգաք, չլսեք գազի արտահոսք կամ չնկատեք գազի արտահոսքի այլ նշաններ, և անջատե՛ք այն ՄԻԱՅՆ, եթե դա անելն անվտանգ է:

Այն ինքներդ ետ մի՛ միացրեք: Գազը կրկին միացնելու, պատրույգները կրկին վառելու և սարքերը սպասարկելու համար զանգահարեք SoCalGas:

- Ստուգեք Ձեր ջրատաքացուցիչի ու ջեռուցիչի օդանցքները: Եթե ծխաօդատար համակարգն առանձնացվել է երկրաշարժի կամ այլ դեպքի հետևանքով, այն կարող է հանգեցնել Ձեր տուն վտանգավոր ծխի ներհոսքի: Մի՛ շահագործեք Ձեր սարքը, քանի դեռ այն պատշաճ ծխաօդատար համակարգ չունի: Ջեռուցիչի ծխի ոչ պատշաճ օդամղման նշաններից են պահուհանների ներսի կողմից նկատվող խոնավությունը կամ սարքի աշխատանքի ընթացքում զգացվող արտասովոր հոտը:
- Մի՛ վառեք կրակ և մի՛ միացրեք որևէ էլեկտրական սարք, լույսի անջատիչ կամ այլ սարքավորում, որից կարող է կայծ բռնկվել, մինչև վստահ չլինեք, որ գազի որևէ արտահոսք չկա:

ԻՆՉՊԵՍ ՃԱՆԱՉԵԼ ԳԱԶԻ ԱՐՏԱՀՈՍՔՆ ՈՒ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԴՐԱՆ

Կարևոր է հիշել, որ բնական գազը դյուրավառ է և որ հասարակ կայծը կարող է հանդիսանալ բռնկման աղբյուր: Ձեր տեսողությունը, լսողությունն ու հոտառությունը, այլ նշաններին հետևելու հետ մեկտեղ, կարող են զգուշացնել գազի արտահոսքի առկայության մասին:

Հետևեք

- Գազի սարքի վնասված միացումներին,
- Օդ արտամղվող կեղտի կամ ջրի նշաններին,
- Խողովակի երկայնքով կամ դրա մերձակայքում չորացած կամ թոշնած բուսականությանը (երբ միջավայրը խոնավ է),
- Գազատարի մերձակայքում հրդեհին կամ պայթյունին,
- Երկրաշարժի, հրդեհի, հեղեղի կամ այլ աղետի հետևանքով մերկացած խողովակաշարին:

Լսեք

- Արտասովոր ձայն, օրինակ՝ ֆշշոց, սուլոց կամ գվվոց, գազի գծի կամ սարքավորման մերձակայքում:

Հոտ առեք

- Բնական գազի յուրօրինակ հոտը*

* Ոմանք անկարող են զգալ այդ հոտը, որովհետև ունեն հոտառության նվազած կարողություն, հոտառության հոգնածություն (հոտին տևական ենթարկվածության հետևանքով դրա ընկալման սովորական, ժամանակավոր անկարողություն) կամ որովհետև այդ հոտը քողարկված կամ թաքնված է առկա այլ, օրինակ՝ եփելու, խոնավության, նեխածության կամ քիմիական հոտերի պատճառով: Ի հավելումն, խողովակի ներսում ու հողի մեջ որոշ պայմաններ

կարող են թուլացնել հոտը՝ բերելով հոտավետության կորստի՝ այնպես, որ այն այլևս հոտառությամբ հայտնաբերելի չլինի: Հոտի թուլացման մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **socalgas.com**:

Եթե բնական գազի հոտ եք առնում կամ գազի արտհոսք եք կասկածում

- Մնացեք Հանդարտ,
- Լուցկի, մոմ կամ ծխախոտ ՄԻ՛ վառեք,
- ՄԻ՛ միացրեք/անջատեք էլեկտրական սարքեր, լույս կամ կայծ առաջացնող մեկ այլ առարկա,
- Անմիջապես հեռացե՛ք տարածքից և ապահով վայրից զանգահարե՛ք SoCalGas **1-888-427-1345** շուրջօրյա, շաբաթը յոթ օր հասանելի հեռախոսահամարով կամ զանգահարե՛ք **911**:

ԻՆՉՊԵՍ ԱՆՋԱՏԵԼ ԳԱԶՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԴԵՊՔՈՒՄ

Արտակարգ իրավիճակի դեպքում կարևոր է գիտենալ՝ ստույք որտեղ է Ձեր չափիչը գտնվում:

Չափիչին դեմքով կանգնելով՝ կտեսնեք գետնից դեպի չափիչ անցնող խողովակ: Դադարեցման փականը անցնում է այդ խողովակին զուգահեռ, սովորաբար գետնից մոտավորապես 6-8 մատնաչափ բարձրության վրա: **Օգտագործեք 12 մատնաչափի կամ ավելի մեծ տրամաչափի բացովի պտուտակաբանալի՝ փականը մեկ քառորդով որևէ կողմ պտտելու համար, այնպես, որ փականը բերվի խողովակի նկատմամբ խաչաձև դիրքի (տե՛ս նկարը):**



Սովորական գազային փականի տեսքը մոտիկից

Կարևոր է. Գազի չափիչին, խողովակներին, փականներին ու կից մասերին դիպչելիս միշտ զգո՛ւշ եղեք: Անսարք կենցաղային սարքերը կամ էլեկտրական լարերը կարող են պատահաբար էլեկտրականություն սնուցել գազաչափիչին կամ համապատասխան գազային սարքավորմանը՝ հանդիսանալով էլեկտրահարման պատճառ:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՇՈՒՐՋՕՐՅԱ ԳԻԾ՝
1-888-427-1345. TDD/TTY 1-800-252-0259

Գազն անջատելուց հետո

Գազը չափիչից անջատելու դեպքում թողեք այն անջատած: Այն ինքներդ ետ մի՛ միացրեք: Պատրույգները կրկին վառելու և սարքավորումները սպասարկելու համար զանգահարե՛ք SoCalGas:

Գազի սարքի փականները

Ապահովության նպատակով յուրաքանչյուր գազասարքի վրա, պատի ու սարքի միակցիչի միջև, պետք է տեղադրված լինի փական: Եթե սարքերից մեկում արտահոսք է ի հայտ գալիս, ապա փականը թույլ կտա Ձեզ դադարեցնել գազի հոսքը դեպի տվյալ սարք, այլ ոչ թե դադարեցնել ամբողջ գազամատակարարումը դեպի չափիչ: Որոշ փականներ կարելի է պտտել միայն պտուտակաբանալիով:

Գազասարքի փականները թույլ են տալիս գազի տեղային անջատում իրականացնել, եթե որևէ կոնկրետ սարքից գազի արտահոսք է առաջանում:

ԳԱԶԱՏԱՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Գազատարի սպասարկումն ու բարելավումը

Մենք պարբերաբար իրականացնում ենք գազատարի անվտանգության աշխատանքներ, այդ թվում՝ պարեկություն, փորձարկում, վերանորոգում և խողովակների փոխարինում: Մենք պահպանում ու գերազանցում ենք գազատարի անվտանգ շահագործման ու սպասարկման դաշնային ու նահանգային բոլոր պահանջները, ներառյալ՝ աշխատակիցների շարունակական տեխպատրաստումն ու թեսթավորումը: Մեր նպատակն է հայտնաբերել ու լուծել հավանական խնդիրները, նախքան որևէ մեծ խնդրի ծագումը: Խիտ բնակեցված տարածքներում SoCalGas-ը նաև գազատարի ամբողջականության կառավարման շատ լուրջ ծրագիր է իրականացրել: Անվտանգության տեսչության արդիական միջոցների օգնությամբ մենք իրականացնում ենք գազատարի վիճակի մոնիթորինգ և ստուգում մեր ընթացիկ սպասարկման աշխատանքների արդյունավետությունը: Այս կարևոր տեսչություններն իրականացնելու համար մեր գազատարերի մերձակայքը պետք է մաքուր լինի թփերից, ծառերից, ցանկապատերից ու այլ կառույցներից:

Ցուցանակները նշում են Ձեր շրջակայքում ամենախոշոր գազատարերը

Ցուցանակները դիտավորյալ նշում են ստորգետնյա գազատարի միայն մոտավոր վայրը: Ցուցանակները չեն նշում գազատարի խորությունը կամ տարածքով անցնող խողովակաշարերի քանակը: Բնական գազի՝ Ձեր տարածքով անցնող խոշոր խողովակաշարերի քարտեզները նայելու և դրանց մոտավոր անցագծերը հայտնաբերելու համար տե՛ս Gas Transmission and

High Pressure Distribution Pipeline Interactive Map (Փոխադրող և բարձր ճնշման բաշխիչ գազատարերի ինտերակտիվ քարտեզը) **socalgas.com** -ում, կամ այցելե՛ք National Pipeline Mapping System -ի կայքէջը **www.npms.phmsa.dot.gov/***-ում: Այս քարտեզները նշում են գազատարերի անցման միայն ընդհանուր վայրը և երբեք չպետք է դիտվեն իրբև այլընտրանք փորելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ **811** հեռախոսահամարով զանգահարելու անհրաժեշտությանը:
**Ծանոթություն. NPMS -ի կայքէջը տանում է երրորդ կողմի կայքէջ, որը SoCalGas -ի մաս չէ և ցույց չի տալիս High Pressure Gas Distribution Lines (Բարձր ճնշման գազային բաշխիչ գծերի) տեղակայման վայրերը:*

ՆԱԽՔԱՆ ՓՈՐԵԼԸ ԶԱՆԳԱՀԱՐԵ՛Ք **811**. ԶԱՆԳՆ ԱՆՎՃԱՐ Է

Խողովակաշարերը կարող են լինել ամենուր, ներառյալ՝ փողոցները, մայթերն ու մասնավոր սեփականությունը՝ երբեմն գետնից սոսկ մի քանի մատնաչափ խորությամբ: Փորելը, տնկելը, քանդելն ու փորման այլ աշխատանքները գազատարերի վնասման հիմնական պատճառներն են: Ահա ինչու է կարևոր գիտենալ՝ որտեղով են դրանք անցնում, նախքան փորման որևէ կարգի աշխատանք ձեռնարկելը:

Մեծ շինարարություն եք պլանավորում, թե բակի պարզ բարեկարգում, Ձեր ու Ձեր շրջապատի անվտանգության համար անհրաժեշտ է, որ զանգահարեք **Underground Service Alert 811** (Ստորգետնյա ծառայության ահազանգի գիծ) ՝ առավոտյան 6:00 -ից մինչև երեկոյան 7:00 -ը, երկուշաբթի-ուրբաթ (բացառությամբ տոն օրերի): Underground Service Alert -ը, SoCalGas -ի և տարածքում գործող կենցաղսպասարկման այլ ծառայությունների հետ համակարգված, կնշի կենցաղսպասարկման ստորգետնյա գծերի անցման վայրերը: Այս ծառայությունն ԱՆՎՃԱՐ է և կօգնի կանխել մարմնական վնասվածքները, ունեցվածքի ծախսատար վնասներն ու կենցաղսպասարկման ծառայության ընդհատումները:

Երբ բոլոր գծերն արդեն նշված են, զգուշորեն և միայն ձեռքի գործիքների օգնությամբ փորեք նշված յուրաքանչյուր կենցաղսպասարկման գծից 24 մատնաչափ հեռավորությամբ՝ պարզելու համար բոլոր գծերի ճշգրիտ անցումները՝ նախքան տեղանքում էքսկավատորային ծանր տեխնիկա օգտագործելը: 24 մատնաչափը չափեք խողովակի՝ նշված արտաքին տրամագծի յուրաքանչյուր կողմից: Խողովակի որևէ վնասվածքի մասին անմիջապես հաղորդեք մեզ՝ զանգահարելով **1-888-427-1345**: ՆՈՒՅՆԻՍԿ ԱՄԵՆԱՁՆՇԻՆ ՎՆԱՍՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԶԵԿՈՒՅՑԵԼ: Խողովակի, դրա ներկի կամ դրան կից կամ դրա երկայնքով անցնող մեկ այլ միավորի, օրինակ՝ լարի վրա որևէ նույնիսկ թեթև վնասվածք, քերծվածք կամ ճկվածք կարող է ապագայում հանգեցնել վտանգավոր ընդհատման կամ արտահոսքի: Եթե Ձեր կողմից որևէ թվացյալ

ՆՈՒՅՆԻՍԿ փոքր վնաս է պատճառվում խողովակին, ԿԱՄ ԽՈՂՈՎԱԿԻՆ ԿՑՎԱԾ ՈՐԵՎԷ ՄԻԱՎՈՐԻ, ապա ՄԻԵՎՆՈՒՅՆ Է պե՛տք է մեզ անհապաղ ծանուցեք՝ զանգահարելով **1-888-427-1345**: Գազատարի անվտանգության մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **socalgas.com**:

ՁԵՐ ԳԱԶԻ ԳԾԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

SoCalGas -ը պատասխանատու է Ձեր չափիչին բնական գազ մատակարարող գազի գծերի սպասարկման համար: Սակայն, եթե սեփականատեր եք, ունեցվածքի կառավարիչ, կենվոր և/կամ ժամանակավոր բնակիչ, ապա Դուք պատասխանատու եք չափիչի Ձեր մասում գազի բոլոր գծերի խնամքի համար: Հաճախորդի սեփականություն հանդիսացող գազի նման գծերը ներառում են այն ողջ խողովակային տնտեսությունը, որն անցնում է.

- Ձեր գազի չափիչից դեպի Ձեր ունեցվածքի տարածքում գտնվող սարքերը,
- Ճանապարհամերձ գազի չափիչից դեպի Ձեր տուն (երբ չափիչն անմիջապես Ձեր տան կողքը չէ),
- Ձեր չափիչից ստորգետնյա անցմամբ դեպի շինություն, ջրավազանի/բաղնիքի ջրատաքացուցիչ, մանղալի կամ գազի այլ սարք:



Գազի խողովակների խնամքն անտեսելը լի է հնարավոր վտանգներով՝ քայքայման և արտահոսքի պատճառով: Ձեր գազի գծերի պատշաճ խնամքն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ դրանք պարբերաբար զննեք՝ անապահով պայմաններ բացահայտելու նպատակով, ներառյալ՝ քայքայում (եթե խողովակը պողպատից կամ այլ մետաղից է) ու արտահոսքը, և անհապաղ վերացնեք որևէ անապահով իրավիճակ: Արտոնագրված որակյալ մասնագետը, ինչպիսին օրինակ՝ ջրմուղագործական կամ ջերմամատակարարման ծառայության կապալառուն, կարող է օգնել Ձեզ գտնել, զննել ու վերանորոգել գազի Ձեր ստորգետնյա գծերը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Եթե գազի գծերի Ձեր համակարգը խմբային չափիչով է, ապա U.S.Department of Transportation-ը պահանջում է, որ Ձեր կենվորներին ծանոթացնեք վերը նշված տեղեկատվությանը: Դա կարող եք անել՝ տեղադրելով սույն ուղեցույցի պատճենները Ձեր կենվորների կողմից հաճախ այցելվող մի ընդհանուր վայրում:

ԳԱԶԻ ՉԱՓԻՉԻ ՄԱՍԻՆ

Անվտանգ հասանելիությունը պարտադիր է

Ձեր սեփականության տարածքում տեղակայված չափիչի, կարգավորիչի ու խողովակային տնտեսության սեփականատերն ու սպասարկողը SoCalGas-ն է: Համաձայն Tariff Rule 25 -ի՝ SoCalGas -ն ունի Ձեր սեփականության տարածքում գտնվող իր սարքավորումներին հասանելիության իրավունք: Մեր սպասարկման աշխատակիցները պետք է ապահով ելումուտ ունենան դեպի չափիչը՝ զերծ թփերից, շինություններից, թափոններից ու այլ խոչընդոտող վտանգներից: Մեկ անգամ ևս ստուգեք դեպի Ձեր չափիչը տանող ճանապարհը՝ վստահ լինելու համար, որ այս անապահով իրավիճակներից և ոչ մեկն առկա չէ: Եթե ցանկանում եք Ձեր դարպասը փակ պահել, ապա խնդրում ենք կապվել մեզ հետ՝ ձեռք բերելու պայմանավորվածություն չափիչի ընթերցման հետագա օրերին դեպի այն ազատ ելումուտն ապահովելու կապակցությամբ: Կարող է նաև, որ մեզ պետք լինի կապվել Ձեզ հետ, եթե դարպասը փակ է, իսկ մեզ անհրաժեշտ է աշխատել չափիչի հետ կամ ստուգել ստորգետնյա խողովակները: Արտակարգ իրավիճակի դեպքում հրշեջ ծառայությունը կամ SoCalGas -ը կարող են անվտանգության նկատառումներով ստիպված լինել անջատել չափիչը: Խնդրում ենք ապահովել, որ այն մշտապես հասանելի լինի:

Չափիչներն ընթերցվում են ամիսը մեկ անգամ այդ նպատակով նախատեսված կամ մոտակա ամսաթվին (տպված է Ձեր գազի հաշվի վրա): Եթե Ձեր սեփականության տարածքում գտնվող չափիչը որևէ պատճառով հասանելի չէ, ապա Դուք կստանաք գազի՝ մոտավոր գնահատված հաշիվ: Չափիչն ընթերցող աշխատակիցներին արգելվում է բակ մտնել, եթե այնտեղ վտանգավոր կամ ագրեսիվ շուն կա, և մեր սպասարկող անձնակազմին նույնպես արգելվում է բակ մտնել, եթե այնտեղ որևէ շուն կա: Ուրեմն, մեր աշխատակիցների անվտանգության համար, մշտապես պահեք Ձեր շանը գազի չափիչից հեռու տարածքում: Չափիչի ընթերցման և սպասարկման օրերին պահեք Ձեր շանը շենքի ներսում, ավտոտնակում, կամ մեկ այլ ապահով փակ վայրում: Կապված, պարանոցի թոկով կամ շղթայով զսպված շունը մեր աշխատողների համար ապահով աշխատանքային միջավայր չի ստեղծում:

Չափիչին միջամտելը

Գազի չափիչին և/կամ գազախողովակային տնտեսությանը միջամտելը կարող է հրդեհ կամ պայթյուն առաջացնել: California Penal Code -ի (Կալիֆորնիայի քրեական օրենսգիրք) համաձայն՝ որևէ գազային մայրուղու կամ գազատարի վրա տեղակայված որևէ փական, չափիչ, խողովակ կամ որևէ այլ սարք միտումնավոր հանելը, դրան խոչընդոտելը կամ միջամտելը համարվում է հանցագործություն:

Որևէ խողովակ, սարք կամ սարքավորում տեղադրելը կամ միացնելը գազի չափիչի որևէ մասին կամ դրան միացված խողովակային համակարգին, ընդհուպ մինչև և ներառյալ չափիչի սպասարկման խաչուկը, արգելվում է. այն կհանվի և կարող է լրացուցիչ գանձումների պատճառ հանդիսանալ:

Մի՛ օգտագործեք գազի չափիչը, գազի պատվանդանը, գազի խողովակային համակարգը կամ հարակից սարքավորումները էլեկտրազոդման կամ գետանցման համար, քանի որ այդ անելն անվտանգ չէ և չի թույլատրվում: Զգուշություն ցուցաբերեք գազի չափիչներին, պատվանդաններին, փականներին ու կից մասերին դիպչելիս: Անսարք կենցաղային տեխնիկան ու անսարք կենցաղային էլեկտրալարերը կարող են ակամա էլեկտրականություն սնուցել գազային համակարգ, ինչը կարող է հանգեցնել էլեկտրահարման:

California Public Utilities Commission -ի (Կալիֆորնիայի հասարակական կենցաղսպասարկման ծառայությունների հանձնաժողով), (CPUC) General Order 112-E -ի (112-E Ընդհանուր հրաման) համաձայն՝ միայն SoCalGas -ն է լիազորված շահագործել գազի մատակարարման անջատիչ փականը:

Բոլոր հաճախորդները պետք է կրեն գազի գողության ծախսերը : Եթե տեղյակ եք որևէ մեկի մասին, ով միջամտում է գազի չափիչին կամ խողովակային համակարգին, ապա պե՛տք է զեկուցեք SoCalGas -ին: Ձեր զանգի գաղտնիությունը կապահովվի:

Ձեր չափիչն ընթերցելը

Ձեր գազի չափիչը գրանցում է օգտագործած էներգիայի ծավալը բնական գազի խորանարդ ֆուտերով: Ձեր չափիչն ընթերցելը կարող է նույնքան դյուրին լինել, որքան ժամացույցին նայելով ժամ որոշելը: Ձախից աջ կարդացե՛ք միայն մեծ թվացույցերը՝ 1,000 միավոր/պտույտ և բարձր: Փոքր թվացույցերը միայն փորձնական նպատակ ունեն: Եթե սլաքը երկու թվերի միջև է, գրանցեք փոքր թիվը: Վերը բերված օրինակում ցուցիչը 6084 է:

Ձեր օգտագործած գազի ծավալը ստուգելու համար նայեք վճարման ժամկետի սկզբին ու ավարտին չափիչի գրանցումները (այս երկու գրանցումը նշված է Ձեզ ներկայացվող հաշվի վրա): Երկու թվերի միջև տարբերությունը Ձեր օգտագործած գազի ծավալն է հարյուր խորանարդ մետրերով:

ԾԽԱՀԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Իբրև ապահով ու վստահելի սպասարկում տրամադրելու մեր հանձնառության դրսևորում, SoCalGas -ը տան կամ բիզնեսի ծխահարման դեպքում նախօրոք կանջատի գազամատակարարումը և կվերականգնի այն դրա ավարտին: Գազի մատակարարման անջատիչ փականն աշխատեցնելու իրավասություն ունի միայն SoCalGas -ը: Ծխահարման ծառայության կապալառուներն իրավասու չեն այս ծառայությունները մատուցել: Մենք մատակարարման փականի անջատման ու վերաբացման բոլոր ծառայությունները կտրամադրենք անվճար: SoCalGas -ը կզննի ու կհամապատասխանեցնի բոլոր սարքերը անվտանգ ու

արդյունավետ շահագործման պահանջներին՝ իբրև գազամատակարարման վերականգնման ծառայության մաս:

Ծխահարման նպատակով գազամատակարարումն անջատելու համար դիմումը պետք է ներկայացնել մատակարարման դադարեցումից առնվազն երկու աշխատանքային օր առաջ: Ձեր գազի մատակարարումը վերականգնելու համար առնվազն մեկ աշխատանքային օր առաջ անհրաժեշտ է ծանուցում ներկայացնել: Սպասարկման այց նշանակելու համար զանգահարեք **1-888-427-1345**: Մատակարարման վերականգնման պատվերներն ընդունվում են ոչ շուտ, քան վրանը տեղադրելուց ու շինությունը ծխահարելուց երկու օր անց: Մատակարարման վերականգնումը կարող է նշանակվել վրանը հավաքելու օրը, եթե SoCalGas -ին ներկայացնեք Ձեր ծխահարման կապալառուի կողմից տրված «Certification for Re-Entry» -ն («Մուտքի թույլտվության վավերագիր»), որով վավերացվում է, որ շինություն մուտք գործելն ապահով է: Խնդրում ենք գազի չափիչի և տան դռան ճանապարհը պահել անցանելի:

SoCalGas -ի՝ տեղում աշխատող մասնագետներին իրավունք չի տրվում մուտք գործել շինություններ, որոնք մասամբ կամ ամբողջովին վրանապատված են ծխահարման նպատակով:

ՇՄՈԼ ԳԱԶԻ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ձեր գազի սարքերի ապահով ու արդյունավետ շահագործման նպատակով դրանք ամեն տարի պետք է տեսչության ենթարկվեն SoCalGas -ի կամ այլ արտոնագրված որակյալ մասնագետի կողմից: Տարեկան տեխսպասարկումը չկատարելը կարող է հանգեցնել սարքերի անարդյունավետ շահագործման և առանձին դեպքերում՝ շմոլ գազի վտանգավոր արտահոսքի:

Շմոլ գազն անգույն, անհոտ, անհամ գազ է, որն առաջանում է, երբ ածխածնի վրա հիմնված վառելիքը, օրինակ՝ կերոսինը, բենզինը, պրոպանը, բնական գազը, նավթը, փայտածուխը կամ փայտը, այրվում է թթվածնի անբավարար առկայության պայմաններում՝ առաջացնելով անավարտ այրում կոչվող երևույթը: Կենցաղային տեխնիկայի պարագայում, սա կարող է տեղի ունենալ ոչ ճիշտ տեղադրման, անբավարար տեխսպասարկման, սարքավորման ոչ ճիշտ շահագործման կամ անսարքության հետևանքով: Քանի որ շմոլ գազն արյան միջից դուրս է մղում թթվածինը, շմոլ գազի բարձր կուտակման կամ ցածր կուտակման բայցև տևական ազդեցությանը ենթարկվելը կարող է հանգեցնել մի շարք բացասական հետևանքների, որոնք իրենց հերթին կարող են լուրջ հիվանդության և մահվան պատճառ դառնալ:

Զգո՛ն եղեք հետևյալի նկատմամբ. (1) սալօջախի՝ դեղին, մեծ և անկայուն կրակ (բացառությամբ դեկորատիվ գազի գերաններ գործածող սարքերի), (2) սարքերի աշխատանքի պահին արտասովոր սուր հոտ, ինչը կարող է վկայել ալդեհիդների՝ անավարտ այրման ենթարտադրանքի արտադրության մասին, և (3) անբացատրելի սրտխառնոց, քնկոտություն, գլխացավեր, գլխապտույտ, փսխում, մտավոր շփոթություն, հևոց և/կամ գրիպի տիպի ախտանշաններ:

Եթե Ձեր տանը շմոլ գազի առկայություն եք կասկածում, ապա.

- Եթե ապահով է, անմիջապես անջատե՛ք կասկածվող գազի սարքը,
- Հեռացե՛ք տարածքից և զանգահարե՛ք **911**,
- Անհապաղ բժշկական օգնության դիմե՛ք, եթե տանը որևէ մեկի մոտ շմոլ գազով թունավորման ախտանշաններ են նկատվում,
- Անմիջապես զանգահարե՛ք SoCalGas **1-888-427-1345** հեռախոսահամարով կամ արտոնագրված որակյալ մասնագետի՝ սարքավորումը տեսչության ենթարկելու նպատակով,
- Կասկածվող գազասարքավորումից մի՛ օգտվեք, մինչև SoCalGas -ի կամ արտոնագրված որակյալ մասնագետի կողմից դրա զննումը, սպասարկումն ու անվտանգ լինելու հաստատումը:

Շմոլ գազի տագնապի ազդանշանիչները

California's Carbon Monoxide Poisoning Prevention Act of 2010 -ը (2010 -ի՝ Կալիֆորնիայի Շմոլ գազից թունավորման կանխարգելման օրենք) պահանջում է, որ հանածո վառելիքի այրման սարքավորում, բուխարի կամ կից ավտոտնակ ունեցող բոլոր բնակելի տարածքներում տեղադրվի շմոլ գազի տագնապի ազդանշանիչ: Մեկ ընտանիքով բնակեցված բոլոր տներում մինչև 2011 թ. հուլիսի 1-ը պետք է տեղադրվի շմոլ գազի տագնապի ազդանշանիչ: Մյուս բոլոր բնակ տարածքները պետք է շմոլ գազի ազդանաշանային սարք ունենան մինչև 2013թ. հունվարի 1-ը: Օգտագործվել կարող են շմոլ գազի տագնապի միայն այն ազդանշանիչները, որոնք հաստատվել են California State Fire Marshall -ի (Կալիֆորնիա նահանգի հրշեջ ծառայության ղեկավար) կողմից և անցել Underwriter's Laboratories (Անվտանգության տեխնիկայի լաբորատորիայի) (UL) -ի արտոնագրումը: Դրանք կարելի է ձեռք բերել կենցաղային ապրանքների կամ տան վերանորոգման տեղական խանութներում:

ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Գազի սարքավորման տեխսպասարկումը միշտ հաճախորդի պատասխանատվության խնդիրն է: Սարքավորման պատշաճ տեխսպասարկումն օգնում է ապահովել դրա շահագործման անվտանգությունն ու արդյունավետությունը: Ահա որոշ օգտակար խորհուրդներ.

- Անցկացրեք Ձեր գազի սարքավորման տարեկան զննում արտոնագրված որակյալ մասնագետի կամ SoCalGas-ի օգնությամբ,
- Երբեք գորգ, ավել, թուղթ կամ այլ դյուրավառ առարկաներ մի պահեք որևէ գազասարքի մոտ,
- Երբեք գազասարքի մոտ մի պահեք որևէ առարկա, որը կարող է խոչընդոտել դեպի սարք օդի նորմալ հոսքը,

- Երբեք բռնկիչ ապրանքներ մի պահեք կամ օգտագործեք գազի սարքի հետ նույն սենյակում կամ գազ կամ ջերմություն արտադրող սարքավորումների մոտակայքում: Բռնկիչ ապրանքները ներառում են բենզինը, աերոզոլային ներկերը, լուծիչները, միջատասպան նյութերը, սոսինձները, խոնավացուցիչները, լաքերը, մաքրող նյութերն ու աերոզոլային այլ տարաները,

- Երբեք մի օգտագործեք Ձեր ջեռոցը, սալօջախը կամ խորովածի մանղալ տունը տաքացնելու համար, որովհետև այդ սարքերն այդ նպատակի համար չեն նախատեսված:

ՍԱԼՕՋԱԽԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

- Սալօջախի մակերեսը ճարպից մաքուր պահեք: Ճարպը դյուրավառ նյութ է, և դրա չափից շատ կուտակումը կարող է հանգեցնել հրդեհի:
- Սալօջախը կամ ջեռոցը մի օգտագործեք տունը տաքացնելու համար:
- Սալօջախի վրա կամ ջեռոցում ալյումինե փայլաթիթեղ մի տեղադրեք, որպեսզի խուսափեք օդանցքների խցանումից, ինչը կարող է հանգեցնել շմոլ գազից թունավորման:

ՋԵՌՈՒՑԻՉԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Կարևոր է ապահովել Ձեր ջեռուցիչի խնամքն ու տեխսպասարկումը, որպեսզի այն շահագործվի անվտանգ ու արդյունավետ: Հետևեք այն օգտակար խորհուրդներին, որոնք նախատեսված են Ձեր տանը տեղադրված ջեռուցիչի տեսակի համար:

Հատակի ջեռուցիչ

Պատի ջեռուցիչ

Հատակի ջեռուցիչ

- Խուսափեք կեղտի կուտակումից՝ կանոնավոր կերպով փոշեծծելով ջեռուցիչի հատակն ու դրա շրջակայքը,
- Երեխաներին հեռու պահեք խորովածի ապարատից, քանի որ այն կարող է խիստ տաքանալ,
- Խուսափեք հրդեհից. խորովածի ապարատի վրա կամ դրա կողքը գորգեր, կահույք կամ դյուրավառ առարկաներ մի տեղադրեք և մի փակեք օդի հոսքը:

Պատի ջեռուցիչ

- Ջեռուցման սեզոնի ընթացքում ամիսը մեկ անգամ մաքրեք պատի մեջ կառուցված օդափոխվող ջեռուցիչի այրման խցում գոյացած նստվածքը՝ կանխելու համար կեղտի կուտակումը,
- Խուսափեք հրդեհից. խորոված ի ապարատի մոտակայքում կահույք կամ դյուրավառ առարկաներ մի տեղադրեք:

Կենտրոնական ծանրության կենտրոնով ջեռուցիչ

- Ջեռուցիչի ջերմագրանցիչները խոչընդոտներից զերծ պահեք,
- Մոտակայքում մի պահեք առարկաներ, որոնք կարող են կասեցնել օդի հոսքը:

Կենտրոնական օդամուղ ջեռուցում

Շատ գազային ջեռուցիչներ աշխատում են՝ օգտագործելով սենյակային օդը: Օդում գոյություն ունեցող կեղտն ու փոշին կամ ջեռուցիչի մեջ կամ շուրջը տեղադրված առարկաները կարող են խցանել օդի հոսքը: Ապահով ու արդյունավետ շահագործման համար Ձեր գազաջեռուցիչը պետք է զերծ պահվի փոշու և կեղտի կուտակումից ու ջեռուցիչի մոտ տեղակայված այլ խոչընդոտներից: Երբեք դյուրավառ առարկաներ, օրինակ՝ թերթեր, բռնկիչ հեղուկներ կամ մաքրելու համար նախատեսված ապրանքներ, մի պահեք կամ օգտագործեք ջեռուցիչի մոտակայքում:

- Օդամուղ ջեռուցիչների մեծամասնությունը ֆիլտր ունի, որը մաքրում է օդը՝ նախքան այն տաքացնելն ու տանը շրջանառության մեջ դնելը: Ջեռուցիչի գործածման սեզոնին ամիսը մեկ անգամ ստուգեք Ձեր ֆիլտրը՝ կեղտի կուտակումը կանխելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում մաքրեք կամ փոխարինեք ֆիլտրը:
- Նոր կամ մաքրված ֆիլտր տեղադրելիս անպայման պատշաճ կերպով վերատեղադրեք ջեռուցիչի առջևի վահանակի դռնակը, որպեսզի այն ամուր փակվի: Երբեք ջեռուցիչը մի աշխատեցրեք առանց առջևի վահանակի դռնակը համապատասխան կերպով տեղադրելու, այլապես շմով գազի թունավորման վտանգ կստեղծեք: Առավել վերջին արտադրության օդամուղ ջեռուցիչներն ապահովիչ ունեն, որը կանխում է ջեռուցիչի շահագործումը, եթե ֆիլտրային սեկցիայի դուռը/վահանակը տեղում չէ:

  ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Որոշ հին օդամուղ ջեռուցիչներ չունեն այս ապահովիչը և կարող են շահագործվել, նույնիսկ եթե ֆիլտրային սեկցիայի դուռը/վահանակը բաց է կամ պատշաճ կերպով տեղադրված չէ: Այս՝ առավել հին արտադրության ջեռուցիչները, եթե տեղադրված են պատի պահարաններում ու

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ. ՀՈԴԱՓՈԽՎՈՂ ԳԱԶԱՋԵՌՈՒՑԻՉՆԵՐՆ ԱՊԱՀՈՎ ՉԵՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱԾՈՒՄԸ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ:

շահագործվում են առանց վահանակի/դռան պատշաճ տեղադրման, ողջ տնով մեկ կտարածեն շմոլ գազ:

- Եթե Ձեր ջեռուցիչը փոխելու կարիք ունեք, ստուգեք համապատասխան ENERGY STAR® մոդելների համար առկա զեղչային առաջարկները **socalgas.com** -ում:



Ճիշտ **Սխալ**

Վահանակի ճիշտ ու սխալ տեղադրումը կենտրոնական օդամուղ ջեռուցման դեպքում: Ջեռուցման սեզոնին ամիսը մեկ անգամ ստուգեք ֆիլտրերը:

ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Բոլոր գազասարքավորումները ունեն հիմնական գազային պատրույգ և շատերը ունեն նաև օժանդակ բռնկման պատրույգ: Հետևեք այս խորհուրդներին՝ նվազեցնելու այդ պատրույգներից դյուրավառ գոլորշիների բռնկման հնարավորությունը.

- Ավտոտնակներում տեղադրված ջրատաքացուցիչները պետք է լինեն այնպիսի բարձրության վրա, որ օժանդակ պատրույգը կամ բռնկման որևէ այլ աղբյուր հատակից լինի առնվազն 18 մատնաչափ բարձր կամ տեղադրված լինի տեղական շինարարական չափանիշներին ու արտադրողի տեղադրման հրահանգներին համապատասխան:

  ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Հնարավոր է, որ նոր արտադրության Flammable Vapor Ignition Resistant (Դյուրավառ գոլորշիների բռնկման դիմադրողականությամբ) (FVIR) բաքի ջրատաքացուցիչների դեպքում արտադրողի պիտակներն ու/կամ հրահանգները չնշեն ավտոտնակային տեղադրման պարագայում 18 մատնաչափ բարձրություն պահպանելու անհրաժեշտության հանգամանքը: Այսուհանդերձ, կիրառվող կարգը չի թարմացվել այնպես, որ ավտոտնակներում տեղադրվող FVIR ջրատաքացուցիչների

նկատմամբբարձրության պահպանման պահանջն այլևս չկիրառվի:

- Երբեք դյուրավառ առարկաներ, օրինակ՝ բենզին, ներկի լուծիչ կամ մաքրող նյութեր, մի տեղադրեք կամ մի օգտագործեք նույն սենյակում, որտեղ գազ կամ ջերմություն արտադրող որևէ սարք կա:
- Ոչ ճիշտ տեղադրված ջրատաքացուցիչները երկրաշարժի հետևանքով կարող են տեղաշարժվել կամ ընկնել: Սա կանխելու համար այն երկու տեղից՝ բաքի վերին ու ստորին մեկ երրորդի մակարդակով, ամրակապեք պատի շտիֆտներին՝ ծանր բոլտերի ու մետաղե ամրակապերի օգնությամբ: Վստահ եղեք, որ ստորին ամրակապն անցնում է ջերմակարգավորիչից առնվազն չորս մատնաչափ բարձրության վրա: Անհրաժեշտ գործիքների հավաքածու կարելի է գտնել տնտեսական ապրանքների՝ Ձեր տեղական խանութում, իսկ տեղադրումն առաջարկում ենք կատարել արտոնագրված որակյալ մասնագետի օգնությամբ:
- Ձեր ջերմաստիճանի ցուցանիշն իջեցնելը կարող է օգնել կանխելու եռման հետ կապված վթարներն ու նվազեցնել Ձեր էներգաօգտագործման ծախսը: Ջրի՝ 125 o F-ից բարձր ջերմաստիճանի պայմանները կարող են սաստիկ այրվածքների կամ նույնիսկ մահվան պատճառ դառնալ: Փոքր երեխա, հաշմանդամ կամ տարեց անդամ ունեցող ընտանիքների համար անհրաժեշտ կարող է լինել 120° F կամ ավելի ցածր ջերմաստիճանի պահպանումը՝ «ԵՌՄԱՆ» ջրի հետ շփումը կանխելու նպատակով:

Ջրատաքացուցիչի ապահով ջերմաստիճանի կարգավորումների համար խնդրում ենք հետևել Ձեր ջրատաքացուցիչի արտադրողի օգտագործման հրահանգներին:
- Եթե Ձեր ջրատաքացուցիչը փոխելու կարիք ունեք, ապա ստուգեք համապատասխան բարձր արդյունավետության մոդելների համար առկա զեղչերի առաջարկները: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **socalgas.com**:

ՉՈՐՈՒՑԻՉԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հրդեհի կամ ֆիզիկական վնասվածքի վտանգը նվազեցնելու համար պահպանեք անվտանգության հետևյալ կանոնները.

- Գազի չորացուցիչները պետք է միշտ օդափոխվեն դրսում:
- Գազի չորացուցիչները չպետք է արտամղեն դեպի ձեղնահարկ, ծխնելույզ, պատ, առաստաղ կամ շինության որևէ ծածկված հատված:
- Օգտագործեք օդանցիկ խողովակի՝ միայն սահմանված կարգի մետաղե նյութ: Պլաստմասսե կամ վինիլային նյութերը գազաչորացուցիչների համար նախատեսված չեն:

- Կանոնավոր կերպով ստուգեք օդամղման խողովակը՝ համոզվելու, որ այն չի կոտրվել, ճկվել կամ որևէ այլ կերպ ենթարկվել սահմանափակ շահագործման:
- Օդանցքի շուրջ ու դրա մերձակա տարածքն ազատ պահեք կեղտի կուտակումից:
- Օդանցքի խողովակի ներսը պետք է կանոնավոր կերպով մաքրվի արտոնագրված որակյալ մասնագետի կողմից:

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԿՐԱԿԱՐԱՆԻ ՎԱՌԵԼԱՓԱՅՏ

- Լուրջ վթարից խուսափելու համար խոնավացուցիչը պետք է մշտապես բաց պահվի: Օգտագործեք գազի վառելափայտի հավաքման գործիքների հետ եկող խոնավացուցիչի փականը:

ՁԵՂՆԱՀԱՐԿԻ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ձեղնահարկի մեկուսացումը կօգնի Ձեզ նվազեցնել էներգաօգտագործման ծախսը: Սակայն, ոչ ճիշտ իրականացված մեկուսացումը կարող է հրդեհի պատճառ հանդիսանալ: Ձեղնահարկի նոր ու արդեն տեղադրված մեկուսացման հարցերում հետևեք հետևյալ խորհուրդներին.

- Մեկուսիչը հեռու պահեք ջերմության բոլոր աղբյուրներից, տաքացուցիչներից, ջրատաքացուցիչներից, աղոտացված լուսավորման սարքերից, հովհարային շարժիչներից, դռան զանգի տրանսֆորմատորներից, ծխնելույզներից, երդիկներից ու օդանցքներից:
- Ջերմության նշված աղբյուրների շուրջը տեղադրեք ոչ դյուրավառ նյութից պատրաստված արգելք:
- Մեկուսիչը հեռու պահեք բոլոր մերկ լարերից ու բաց լարանցումներից:
- Օդամուղ տաքացուցիչի օդամատակարարման բոլոր անցքերը զերծ պահեք որևէ մեկուսիչից:
- Ձեղնահարկի ու տանիքի օդանցքները մի ծածկեք:
- Պարբերաբար ստուգեք ձեղնահարկը, որպեսզի մեկուսիչի տեղաշարժ չլինի:
- Եթե պատշաճ տեղադրման մասին հարցեր ունեք, ապա դիմեք նահանգի կողմից արտոնագրում ունեցող մեկուսացման մասնագետի:
- Եթե ցանկանում եք Ձեր ձեղնահարկի կամ պատի մեկուսացումը բարելավել, ապա ստուգեք զեղչերի առկա առաջարկները **socalgas.com** -ում:

ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԵՏԿԱՆՉԵՐԸ

U.S. Consumer Product Safety Commission -ը (CPSC, ԱՄՆ Սպառողական ապրանքների անվտանգության հանձնաժողով) պարբերաբար անվտանգության հետ կապված հետկանչեր է հայտարարում որոշ գազային սարքերի ու սարքավորումների համար: Ձեր սարքերին վերաբերող հետկանչերի վերաբերյալ տեղեկատվությունը կարող եք ձեռք բերել CPSC -ի կայքէջում (**cpsc.gov**), կամ զանգահարելով CPSC **1-800-638-2772** հեռախոսահամարով: TDD/TTY՝ **1-800-638-8270**: *Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս հղումը Ձեզ տանում է երրորդ կողմի կայքէջ, որը SoCalGas -ի մաս չէ:*

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿՕԳՆԵՆ ՁԵԶ ԽՆԱՅԵԼ

Տնտեսեք գազի վարձի հարցում՝ սահմանափակելով էներգաօգտագործումը:

Տան ջեռուցում

- Մաքսիմալ արդյունավետությամբ շահագործման նպատակով լիովին կարգավորված պահեք Ձեր ջեռուցման համակարգը:
- Մաքրեք կամ փոխեք տաքացուցիչի ֆիլտրերը՝ ըստ արտադրողի առաջարկների, և խնայեք Ձեր ջեռուցման ծախսերի մինչև երկու տոկոսը:
  - Ապահովության ու արդյունավետության նպատակով, պահեք ջեռուցման բոլոր օդանցքները ու տաքացուցիչի չափիչները փոշուց, կեղտից ու խոչընդոտներից զերծ: Դյուրավառ նյութերը, օրինակ՝ աէրոզոլային տարաները, թթվածնի անոթները, բռնկիչ հեղուկները և այլն, պահեք սարքավորումից հեռու:
- Խնայեք ջեռուցման ծախսերի մինչև 30 տոկոսը՝ 3-5 աստիճանով իջեցնելով Ձեր ջերմակարգավորիչի մակարդակը, եթե ներում է առողջությունը:
- Տեղադրեք ծրագրավորվող ջերմակարգավորիչ՝ Ձեր տան ջերմաստիճանն ավտոմատ կարգավորելու համար՝ հարմարավետության և էներգախնայողության նպատակով:
- Խծուծեք ու սեզոնային կարգով ժապավենապատեք օդանցիկ պատուհաններն ու դռները:
- Ստուգեք Ձեր օդանցքներն արտահոսքի մասով: Օդանցքները պետք է վերանորոգվեն մածիկի տիպի խծուծանյութով, այլ ոչ կպչուն ժապավենով: Դուք այդպես կարող եք խնայել Ձեր ջեռուցման ծախսերի 20 տոկոսը:
- Օրվա ընթացքում բացեք պատուհանաձածկերը՝ թույլ տալով, որ արևը ջերմացնի Ձեր տունը: Փակեք դրանք գիշերը՝ սահմանափակելով արտահոսող ջերմության քանակը:
- Խնայեք ջեռուցման ծախսերի մինչև 25 տոկոսը՝ տեղադրելով

նոր կամ նորացնելով Ձեր ձեղնահարկի ու պատերի մեկուսացումը:

- Երբեք մի օգտագործեք գազօջախը կամ բակի խորոված սարքը սենյակը ջեռուցելու համար: Դրանք այդ նպատակով նախատեսված չեն և կարող են հրդեհի ու շմոլ գազի վտանգ առաջացնել:

Տաք ջուր

- Ձեր ջրատաքացուցիչի ջերմակարգավորիչն արտադրողի առաջարկած 120 աստիճանից փոքր-ինչ ցածր սահմանելով՝ Դուք կօգնեք կանխել այրոցներն ու նվազեցնել Ձեր էներգածախսը:
- Նորոգեք կաթացող ծորակները: Տաք ջրի վայրկյանում մի կաթիլը տարեկան կարող է վատնել 500 գալոն ջուր:
  - Եթե գազի ջրատաքացուցիչ ունեք, ապա դրեք այն օժանդակ պատրույգի ռեժիմի վրա, երբ արձակուրդ եք գնում: Եթե ունեք էլեկրական ջրատաքացուցիչ, ապա անջատեք այն ապահովիչից:
- Սպասք լվացող մեքենան աշխատեցրեք, երբ այն լիարժեքորեն բեռնված է:
- Տեղադրեք ցածր հոսքայնության, բաձր ջրախնայողության ցնցուղներ՝ ջրի գործածումը կրճատելու և ջրատաքացման ծախսի մինչև 10 տոկոս խնայման համար:
  - Լոգանք ընդունելու փոխարեն ավելի կարճատև, պաղ ցնցուղ ընդունեք: Լոգանքները կարող են պահանջել մինչև 2 ½ անգամ ավելի շատ տաք ջուր, քան հինգ րոպեանոց ցնցուղը:
  - Ջերմամեկուսացրեք տաք ջրի արտաքին, չծածկված խողովակները:

Լվացք

- Լվացեք լիաբեռ, կամ կարգավորեք ջրի մակարդակն այնպես, որ այն համապատասխանի բեռան ծավալին: Լվացքն արեք սառը ջրով և ընտրեք լվացքի փոշի կամ հեղուկ, որը նախատեսված է սառը ջրով լվացքի համար:
- Միշտ, երբ հնարավոր է, չորացրեք լիաբեռ: Երբեք չափից ավելի մի չորացրեք: Չորացրեք երկու կամ ավելի բեռ մեկը մյուսի հետևից, որպեսզի օգտվեք չորացուցիչում գոյացած տաք օդի առավելությունից: Յուրաքանչյուր բեռնումից առաջ մաքրեք բամբակաթելի ցանցը: Պարբերաբար չորացուցիչի օդամուղից, չորացուցիչի ետնամասից ու բամբակաթելի ցանցի ետևից մաքրեք բամբակաթելի ու կեղտի մնացորդները:

Եփելը

Նախօրոք մի տաքացրեք Ձեր գազօջախը, եթե դրա անհրաժեշտությունը չկա, և մի բացեք ջեռոցի դուռը սննդի պատրաստման ժամանակ:

- Օգտագործեք կաթսաներ ու թավաներ, որոնք համապատասխանում են գազօջախներին, և եփելիս ծածկեք կաթսաները: Եփեք միաժամանակ մի քանի ուտեստ և ըստ տնողության ու ջերմաստիճանի ուղեցույցերի:
- Ջեռոցի ու գազօջախի այրիչները պահեք մաքուր:

Ի՞ՆՉ ԱՐԺԵ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԸ

Ստորև բերվում են բնական գազ օգտագործող սովորական սարքերի միջին ծախսերը.

ՋԵՌՈՒՑԻՉ

Միջին հաշվով, ձմռան ամենացուրտ ամիսներին սովորական տան ջեռուցման ծախսը կազմում է օրը մոտ $2.00:

ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ

Երեք անդամով ընտանիքի տաք ջրի ծախսը (օրը 60 գալոն) ամիսը մոտ $27.00 է:

ԳԱԶՕՋԱԽ

Միջին ռեժիմով մեկ ուտեստ եփելու ծախսը կազմում է մոտ $0.12:

ՀԱԳՈՒՍՏԻ ՉՈՐԱՑՈՒՑԻՉ

Մի բեռան ծախսը կազմում է մոտ $0.12:

Միայն նկարագրական նպատակով: Միջին ցուցանիշները բերված են մեկ ընտանիքի համար նախատեսված 1,600 քառ. ֆուտ տարածքով տան համար, որն օգտագործում է տարեկան 443 թերմ գազ, Հարավային Կալիֆորնիայում: Ծախսերը ներկայացված են Southern California Gas Company –ի բնակչության համար նախատեսված միջին սակագնի՝ մեկ թերմի համար $1.50 -ի հաշվարկով, և տան՝ մինչև Ֆարենհայտի 68 աստիճան տաքացման պայմաններում: Սակագները ենթակա են փոփոխման: Իրական ծախսերը կարող են տարբեր լինել և էներգաարդյունավետ սարքավորումներով կահավորված ավելի նոր տների պարագայում կարող են լինել ավելի ցածր:

ՁԵՐ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇԻՎԸ ԿԱՐԴԱԼԸ

The Gas Company
A Sempra Energy utility

ACCOUNT NUMBER 128 102 5990 8
SERVICE FOR
JOHN Q PUBLIC
123 TEST ST
PLACENTIA CA 92870-1127

1

DATE MAILED Jun 24, 2010
24 Hour Service
1-800-427-2200 *English*
1-800-342-4545 *Español*
1-800-252-0259 *TTY*
www.socalgas.com

Page 1 of 2

H

You are currently receiving the CARE discount. The discount now appears as a separate credit on your bill.

Account Summary

Previous Balance			$28.53
Payment Received	06/04/10	THANK YOU	- 28.53
Current Charges			+ 34.82
Total Amount Due			**$34.82**

2

Current Charges

Rate: GR - Residential **Climate Zone:** 1 **Baseline Allowance:** 16 Therms
Meter Number: 01580645 (*Next scheduled read date Jul 14 2010*) **Cycle:** 8

Billing Period	Days	Current Reading -	Previous Reading =	Difference x	Billing Factor =	Total Therms
05/13/10 - 06/15/10	33	5446	5411	35	1.017	36

GAS CHARGES		Amount($)
Customer Charge	33 Days x $.16438	5.42
Gas Service (*Details below*)	36 Therms	
	Baseline / Over Baseline	
Therms used	16 / 20	
Rate/Therm	$.75625 / $.99600	
Charge	$12.10 + $19.92 =	32.02
CARE Program Discount		-7.49
	Total Gas Charges	**$29.95**

5

7

TAXES & FEES ON GAS CHARGES		Amount($)
State Regulatory Fee	36 Therms x $.00068	.02
CARE Public Purpose Surcharge	36 Therms x $.04671	1.68
Los Angeles City Users Tax	$31.65 x 10.00%	3.17
	Total Taxes and Fees on Gas Charges	**$4.87**
	Total Current Charges	**$34.82**

DATE DUE	Jul 16, 2010
AMOUNT DUE	$34.82

3

Gas Usage History (*Total Therms used*)

4

	Jun 09	May 10	Jun 10
Total Therms used	32	34	36
Daily average Therms	1.1	1.2	1.1
Days in billing cycle	30	29	33

In your bill inserts this month:

- *What can you do to reduce your energy costs?*
- *What is the clean fuel of choice?*
- *Easy, secure and good for the environment*

6

The Gas Company's gas commodity cost per therm for your billing period:
Jun. . . . . $.41577 May. . . . . $.42672

PLEASE KEEP THIS PORTION FOR YOUR RECORDS. (FAVOR DE GUARDAR ESTA PARTE PARA SUS REGISTROS.)
PLEASE RETURN THIS PORTION WITH YOUR PAYMENT. (FAVOR DE DEVOLVER ESTA PARTE CON SU PAGO.)

The Gas Company
A Sempra Energy utility

8

Save Paper & Postage
PAY ONLINE
www.socalgas.com

ACCOUNT NUMBER
128 102 5990 8

DATE DUE	Jul 16, 2010
AMOUNT DUE	$34.82

Please enter amount enclosed.
$
Write account number on check and make payable to The Gas Company.

CY 08 1475 1867

JOHN Q PUBLIC
123 TEST ST
PLACENTIA CA 92870-1127

THE GAS COMPANY
PO BOX C
MONTEREY PARK CA 91756-5111

80 1281025990 00003482 85 1281025990 0000062984

1. կապնվելու միջոցը ավելի հստակ է ներկայացված:
2. Նոր ամփոփ հաշիվն ավելի հստակ է ներկայացնում Ձեր նախկին հաշվեկշիռն ու վճարումը, գումարած ներկա գանձումները:
3. Նոր, ավելի դյուրանկատ վճարման ամսաթիվ ու վճարվելիք գումար:
4. Նոր գրաֆիկն օգտագործման համեմատական պատկեր է տալիս:
5. Գազօգտագործման մասին պարզեցված տեղեկատվություն:
6. Կարևոր հաղորդագրությունների և Ձեր գազի հաշվի կառավարման վերաբերյալ խորհուրդների համար նոր էջատարածք:
7. CARE -ում ցուցակագրված հաճախորդների համար զեղչն այժմ Ձեր հաշվում արտացոլվում է առաձին տողով:
8. Մեր առցանց հաշիվները ևս փոխվել են: Մենք առաջարկում ենք «առանց թղթի գործառնության» հաշվի առաքում ու վճարման ընդունում «Իմ հաշվի» միջոցով:

ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՁԵՐ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՄԱՍԻՆ

Ինչպե՞ս են գազի սակագները որոշվում

Գազի սակագները սահմանում է California Public Utilities Commission -ը (CPUC): Հանձնաժողովի նպատակն է խրախուսել բնական գազի արդյունավետ օգտագործումը՝ բոլոր բնակիչ հաճախորդների համար «սահմանային թերմային քվոտայի» հաստատման միջոցով:

Ի՞նչ է սահմանային թերմային քվոտան

Նահանգի օրենսդրությամբ ղեկավարվելով՝ CPUC -ի կողմից հաստատվող «սահմանային թերմային քվոտան» բնական գազի այն քանակն է, որ անհրաժեշտ է միջին տան նվազագույն կարիքները հոգալու համար: SoCalGas-ը պարտավոր է այս «սահմանային» չափի ծավալների համար հաշիվ ներկայացնել բնակչության համար նախատեսված իր ամենացածր սակագնով:

Ի՞նչ է «բժշկական սահմանային քվոտան»

Եթե Ձեր ընտանիքի որևէ անդամ բժշկական հանգամանքների բերումով հավելյալ տարածքի ջեռուցման կարիք ունի, ապա հնարավոր է, որ Դուք կարողանաք հավելյալ ծավալի բնական գազ ստանալ նվազագույն (սահմանային) սակագնով: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **socalgas.com** կամ զանգահարեք 1-888-427-1345:

Ինչու՞ է իմ գազի վարձը փոփոխվում

Սեզոնային եղանակային պայմանները կարող են ազդել բնական գազի այն ծավալի վրա, որ Դուք օգտագործում եք: Երբ դուրսը ցուրտ է, Ձեր ջեռուցիչն ու ջրատաքացուցիչն ավելի մեծ էներգիա են պահաջում Ձեր տունն ու սառը ջուրը տաքացնելու համար: Բնական գազի մեծածախ գների փոփոխությունները, որոնք շուկայական պայմաններից են կախված, ևս կարող են ազդել Ձեր վարձի գումարի վրա: SoCalGas -ն ակտիվորեն փնտրում ու աջակցում է բնական գազի նոր աղբյուրներին ու մատակարարներին, որպեսզի բնական գազի Ձեր ծախսերը մնան հնարավորինս չափ ցածր:

Ինչու՞ է իմ գազի վարձն իմ հարևանի վարձից տարբեր

Թեև ձեր տները կարող են միևնույն չափի լինել, սակայն գազի վարձը կարող է տարբերվել՝ ելնելով տնային ջերմաստիճանի նախընտրություններից ու լվացքի, ցնցուղի ընդունման ու եփելու հաճախականությունից: Հյուրերը կամ ընտանիքի նոր անդամները ևս կարող են նպաստել գազօգտագործման ծավալի աճին: Հատակի ու պատուհանի ծածկերի ու կենցաղային տեխնիկայի տարբերությունները ևս կարող են ազդել Ձեր գազօգտագործման ծավալի վրա:

Ի՞նչ անել, եթե իմ գազի վարձը սովորականից ավելի բարձր է թվում

Ստուգեք հետևյալը.

- Ձերմաստիճանի Ձեր կարգավորիչն ու՞նի անջատիչ: Եթե ոչ, ապա ջեռուցիչն ավտոմատ կմիանա, երբ ջերմաստիճանը սահմանվածից վար ընկնի:
- Ձմռանը կամ ջեռուցիչն օգտագործելիս գոլորշիացման սառեցուցիչի օդանցքերն արդյոք բա՞ց եք թողել:
- Ունե՞ք արդյոք տաք ջրի որևէ կաթացող խողովակ կամ միացում:
- Ձեր լողավազանի կամ բաղնիքի ջեռուցիչը բերե՞լ եք արդյոք «անջատված» կամ «օժանդակ պատրույգային» դիրքի ձմռան ընթացքում: Ջերմակարգավորիչը պարզապես նվազագույն սահմանման վրա դնելը կարող է բերել ջեռուցիչի միացմանը, եթե ջերմաստիճանը զգալի նվազի:
- վերջերս Ձեր հաշվի հետ մեկտեղ հաղորդագրություն ստացե՞լ եք արդյոք գազի սակագների բարձրացման մասին:
- Հաշվետու ժամանակաշրջանում տանը հյուր կամ ընտանիքի նոր անդամ ունեցե՞լ եք:

ՁԵՐ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇԻՎԸ ՎՃԱՐԵԼԸ

Հաշիվները ենթակա են վճարման ստացման պահից և համարվում են ուշացած, եթե չեն վճարվում հաշվի վրա ներկայացված ամսաթվից 19 օրվա ընթացքում: Վճարման չեկերը պետք է հասցեագրվեն The Gas Company -ին, Southern California Gas Company -ին կամ SoCalGas -ին: Ստորև բերվում են վճարման այն տարբերակները, որոնցից կարող եք օգտվել: Վճարման տարբերակների մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք մեր կայքէջը՝ **socalgas.com**:

ՀԱՇՎԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ

Առցանց, My Account- ի միջոցով

Ստացեք ու վճարեք Ձեր հաշիվն առցանց մեր ապահով My Account կայքէջի միջոցով: My Account- ի միջոցով կարող եք նաև դիտել՝ մինչև երկամյա վաղեմության վճարման պատմությունը, դիմել՝ սկսելու, դադարեցնելու կամ տեղափոխելու Ձեր գազամատակարարումը, սպասարկման ծառայության համար հերթագրվելու, պահանջել վճարման միջոցառումներ, և ավելին:

Տնային պայմաններում բանկային գործողություններ

Թույլ է տալիս գազի հաշիվը ստանալ մեկ կայքէջի միջոցով, օրինակ՝ Ձեր բանկի, կրեդիտային միության, բրոկերային ֆիրմայի կամ նախընտրած ցանցային պորտալի: Տնային պայմաններում բանկային գործողություններ տրամադրող շատ կայքեր առաջարկում են էլեկտրոնային հաշիվներ, որը թույլ է տալիս Ձեզ օգնել շրջակա միջավայրի պահպանմանը՝ դադարեցնելով թղթե հաշիվների առաքումն ու փոխարենը ստանալով միայն էլեկտրոնային հաշիվ: Պարզելու համար արդյո՞ք Ձեր ֆինանսական հաստատությունը մասնակցում է նման ծրագրի, այցելեք ebillplace.com/cda/ebillplace.: Ծանոթություն. Այս հղումը Ձեզ տանում է երրորդ կողմի կայքէջ, որը SoCalGas -ի մաս չէ: Կարող եք նաև անդամագրվել անթուղթ հաշվի ստացմանը՝ այցելելով socalgas.com:

Մասնաճյուղերն ու վճարման գործակալությունները

Ձեզ ամենամոտիկ մասնաճյուղը կամ լիազորված վճարման գործակալությունը գտնելու համար այցելեք **socalgas.com**, տեսեք Ձեր հաշվի հակառակ էջը կամ զանգահարեք **1-888-427-1345**: Պատրաստ եղեք հավաքել Ձեր հնգանիշ փոստային ինդեքսը:

Ուղիղ դեբիտ

Թույլ է տալիս Ձեր ամսական վճարն ավտոմատ կերպով ստանալ Ձեր բանկային ընթացիկ հաշվեհամարից, հաշիվը Ձեզ փոստով առաքելուց 10 օր հետո: Եթե ցանկանում եք միանալ «կանաչ քաղաքականությանը», ապա կարող եք անդամագրվել հաշիվն էլեկտրոնային տարբերակով ստանալու համար՝ միաժամանակ շարունակելով վճարել ուղիղ դեբիտով: Պարզապես գրանցվեք անթուղթ հաշվի ստացմանը **socalgas.com** -ում:

Հեռախոսով. Debit, ATM, Visa® և MasterCard®

Մենք վճարման լրացուցիչ տարբերակներ ենք առաջարկում նաև BillMatrix կոչվող անկախ ծառայության միջոցով: Հավելավճար մուծելով՝ կարող եք BillMatrix -ի միջոցով վճարումն իրականացնել Electronic Check -ով, Debit/ATM -ով կամ VISA/MasterCard կրեդիտային քարտերով: Թեև SoCalGas -ն այս ծառայության համար

հավելավճար չի գանձում, սակայն BillMatrix -ը գանձում է ծառայության վարձ՝ յուրաքանչյուր գործարքի համար $1.50-ի չափով: BillMatrix -ի միջոցով հեռախոսով վճարելու համար զանգահարեք 1-800-232-6629: BillMatrix -ից օգտվելու համար անդամագրվել չի պահանջվում:

Կարող եք նաև հաշիվը վճարել հեռախոսով՝ անդամագրվելով SoCalGas -ի Pay by Phone (Վճարել հեռախոսով) ծրագրին: Անդամագրման դիմումի ձևը ստանալու համար կարող եք այցելել **socalgas.com** և ներբեռնել դիմումի ձևը : Անդամագրվելուն պես կարող եք վճարում անել՝ զանգահարելով 1-800-427-2700:

Level Pay Plan (Սահմանված մակարդակի վճարման պլան)

Գրանցվեք Level Pay Plan -ին **socalgas.com** կայքում, եթե ցանկանում եք հարթեցնել Ձեր ամսական գազի հաշվի բարձրացումներն ու իջեցումները: Այս պլանը 12 ամիս ժամանակաշրջանի համար միջինացնում է գազի սպառման ծավալները և ծախսերը: Դուք ամեն ամիս իրական գանձումների փոխարեն վճարում եք միջինացված գումար: Վեց ամիսը մեկ վճարման մակարդակը կարող է վերահաշվարկվել և ճշգրտվել, եթե առկա է զգալի աճ կամ նվազում գազի օգտագործման ծավալի կամ գնի մեջ:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Ձեղչեր և օգնություն

- Համապատասխան ցածր եկամուտ ունեցող հաճախորդների համար մեր California Alternate Rates for Energy (CARE) ծրագրի միջոցով սահմանված է հաշվի 20 տոկոս զեղչ: Հավելյալ տեղեկությունների կամ դիմումի համար այցելեք **socalgas.com** կամ զանգահարեք 1-888-427-1345,TDD/TTY 1-800-252-0259:
- Անվճար տնային բարելավման աշխատանքներ, օրինակ՝ ձեղնահարկի ջերմամեկուսացում կամ դռնանցքերի սեզոնային ժապավենապատում են տրամադրվում համապատասխան, եկամտի առումով սահմանված կարգի տանտերերին ու վարձակալներին մեր Energy Savings Assistance Program -ի միջոցով: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **socalgas.com** կամ զանգահարեք 1-888-427-1345:

  Energy Savings Assistance Program™
- Medical Baseline Program -ի միջոցով նվազագույն սակագնով հավելյալ գազ ստանալու համար կարող են դիմել այն ընտանիքները, որոնք համապատասխան բժշկական ջեռուցման կարիք ունեն: Կպահանջվի ներկայացնել բժշկի վավերագիր: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **socalgas.com** կամ զանգահարեք 1-888-427-1345:

- Ձմռան ամիսներին հաշվի հետ կապված մեկ անգամյա օգնություն ստանալու համար համապատասխան եկամուտ ունեցող հաճախորդները կարող են դիմել մեր Gas Assistance Fund (Գազի օգնության հիմնադրամ): Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **socalgas.com** կամ զանգահարեք 1-888-427-1345:

- Էներգիայի համար վճարումների հարցում օգնություն համապատասխան եկամուտ ունեցող հաճախորդները կարող են նաև հայցել ֆեդերալ ֆինանսավորմամբ գործող LIHEAP ծրագրից: Մանրամասների համար զանգահարեք 1-866-675-662, TDD/TTY 1-916-327-6318, կամ Կալիֆորնիայի հաղորդակցման ծառայություն՝ 7-1-1:

Ցանկանու՞մ եք Ձեր հաշվի մասին ընկերական հիշեցում ստանալ

Եթե երբեմն մոռանում եք վճարել գազի վարձը կամ գիտեք մեկին, ով տարեց է, հաշմանդամ կամ հաճախ բացակայում է տնից, ապա օգտվեք մեր Third Party Notification (Երրորդ կողմի ծանուցում) ծրագրից: Այն անվճար է և կարող է օգնել կանխելու գազի մատակարարման անջատումը: Ահա ինչպես դա անել. ընտրում եք վստահելի որևէ մեկին՝ ընկեր, բարեկամ կամ սոցիալական գործակալություն, որը կստանա Ձեր վճարման ուշացած հաշվի պատճենը: Այդ երրորդ կողմը պատասխանատու չի լինի Ձեր հաշիվը վճարելու համար, բայց կհիշեցնի Ձեզ, որ անհրաժեշտ է վճարել՝ դրանով հանդերձ օգնելով, որ Դուք անհրաժեշտ քայլեր ձեռնարկեք գազամատակարարման դադարեցումը կանխելու նպատակով: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **socalgas.com** կամ զանգահարեք 1-888-427-1345, TDD/TTY 1-800-252-0259:

ՆԵՐԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՂՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Ձեղչեր

SoCalGas -ը տանտերերին, սեփականատերերին, բազմընտանիք միավորներ ունեցող սեփականության կառավարիչներին ու բիզնես հաճախորդներին առաջարկում է էներգարդյունավետության ձեղչային ծրագրեր: Ձեղչեր կարող են առաջարկվել համապատասխան ENERGY STAR® ջեռուցիչների, հագուստի լվացքի մեքենաների, սպասք լվացող մեքենաների, ջերմային մարդկոցով ջրատաքացուցիչների, հոսող ջրի ջրատաքացուցիչների, ձեղնահարկերի ջերմամեկուսացման, պատի ջերմամեկուսացման համար և այլն: Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք **socalgas.com** կամ զանգահարեք.

Բնակիչները. 1-888-427-1345

Բազմընտանիք. 1-888-427-1345

Բիզնես. 1-888-427-1345

Տնային էներգախնայողության գնահատումներ

Ստացեք Ձեր տան էներգաօգտագործման անհատականացված գնահատումը, ինչպես նաև խորհուրդներ՝ Ձեր տան էներգարդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ: Մեր առցանց ու փոստով ուղարկվող գնահատումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **socalgas.com**:

*Այս ծրագրերը ֆինանսավորվում են Կալիֆորնիայի կենցաղսպասարկման ոլորտի սպառողների կողմից և կառավարվում Southern California Gas Company-ի կողմից՝ California Public Utilities Commission -ի հովանու ներքո: Ձեղչերը հասանելի են նրանց, ովքեր առաջինն են ներկայացել՝ մինչև ծրագրի ֆոնդերի սպառումը: Կան նաև այլ պայմաններ:

Energy Upgrade California™

Energy Upgrade California -ն նոր ծրագիր է, որից կարող են օգտվել SoCalGas -ի ու Southern California Edison -ի բնակարանային հաճախորդներ. այն մինչև $4,000 -ի գումար է տրամադրում՝ խրախուսելու համար Ձեր տան արտաքին շերտի էներգարդյունավետությունը բարձրացնող վերանորոգումների կատարումը:** Տան էներգարդյունավետությունն ու ներքին հարմարավետությունը մեծապես բարելավվում են, երբ էներգարդյունավետության բարձրացմանն ուղղված միանգամից մի շարք բարելավումներ են անցկացվում, ներառյալ՝ ջերմամեկուսացումը, անցքերի փակումը, ժապավենապատումը, տարածքների ջեռուցումն ու հովացումը և այլն:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **socalgas.com**, կամ **EnergyUpgradeCA.org**. *Ծանոթություն. Այս հղումը Ձեզ տանում է երրորդ կողմի կայքէջ, որը SoCalGas -ի մաս չէ:*

**Լոս Անջելես շրջանում բնակվող հաճախորդները կարող են իրավասու լինել ստանալու նաև լրացուցիչ զեղչեր Լոս Անջելես շրջանից: Energy Upgrade California ծրագիրը դեռևս նահանգով մեկ զարգացման փուլում է և կարող է փոփոխվել առանց նախնական ծանուցման: Ծրագիրն առաջարկվելու է առաջինը ներկայանալու սկզբունքով, մինչև ֆոնդերը սպառվեն կամ ծրագիրը դադարեցվի: Ծրագրին մասնակցել կարող են միայն Southern California Edison (SCE) -ի և Southern California Gas Company -ի համատեղ հաճախորդները: Մասակցության իրավասու մեկ ընտանիքի համար նախատեսված առանձնացված տները պետք է ունենան SCE -ի և SCG -ի համատեղ սպասարկման տարածքում գտնվող SCE և SCG հաշվի առաքման գործող հասցե: Խրախուսական օգնություն ստանալու համար հնարավոր է, որ պահանջվեն նախնական ու հետօպերատիվ տեսչություններ: Մասնակցությունը սահմանափակվում է մեկ ընտանիքին մեկ խրախուսական վճարման տրամադրմամբ: Խրախուսական վճարման չեկերը կուղարկվեն ծրագրի ավարտից հետո չորսից վեց շաբաթվա ընթացքում: Ծրագրին մասնակցելու իրավունակության պարզաբանման համար խնդրում ենք դիմել Ձեր կենցաղսպասարկման մատակարարին:

Տնային էներգետիկ բարելավման ֆինանսական ծրագիր

Այս ծրագիրը հովանավորվում է SoCalGas -ի կողմից՝ Fannie Mae -ի աջակցությամբ, և օգնում է Ձեզ տնային էներգարդյունավետության բարելավման աշխատանքներ կատարել $2,500 -ից $20,000-ի սահմաններում ցածր տոկոսադրույքով, չապահովված ֆինանսավորման միջոցով: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Viewtech Financial Services -ի ծրագրի համակարգողին՝ 1-888-502-4222:

ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտակարգ իրավիճակներին արձագանքման շուրջօրյա գիծ

Եթե բնական գազի հետ կապված արտակարգ իրավիճակ է ստեղծվել, զանգահարեք մեր շուրջօրյա գծով՝ 1-888-427-1345,TDD/TTY 1-800-252-0259:

Ինքնասպասարկման տարբերակներ

Շուրջօրյա կարգով օգտվեք բազմազան առցանց ծառայություններից: Դա հարմար է և արագ: Պատվիրեք սկսել, դադարեցնել կամ տեղափոխել Ձեր գազի մատակարարումը, սպասարկման ծառայություն պատվիրեք, մուծում կատարեք, և ավելին: Մանրամասների համար այցելեք **socalgas.com**:

Բնակիչների սպասարկման ծառայություններին հերթագրում

Մեր մասնագետ սպասարկման աշխատակիցները կարող են ստուգել Ձեր սարքավորման շահագործման անվտանգությունն ու արդյունավետությունը: Նրանք կարող են նաև կարգավորել գազայրիչներն ու օժանդակ պատրույգները և իրականացնել նորոգման սահմանափակ աշխատանքներ: Այցերը կարող եք նշանակել առցանց, **socalgas.com** -ի միջոցով:

- **ՍՈՎՈՐԱԿԱՆ ՀԵՐԹԱԳՐՈՒՄ - ԱՆՎՃԱՐ**

  Առավոտյան (ժ. 7 -ից մինչև կեսօր), կեսօրից հետո (կեսօրից մինչև երեկոյան ժ. 5 -ը), կամ երեկոյան (ժ. 5 -ից 8-ը):

- **ՀԱՏՈՒԿ ՀԵՐԹԱԳՐՈՒՄ - $25 ՎՃԱՐՈՎ***

  Ժամանումը՝ կոնկրետ ժամի, առավոտյան 8 -ից մինչև երեկոյան 7 -ը, երկուշաբթի-ուրբաթ, յուրաքանչյուր կես ժամը մեկ: Մեր սպասարկման աշխատակիցները կժամանեն պայմանավորված ժամից 30 րոպեի ընթացքում:

  *Վճարի չափը ենթակա է փոփոխության:

Մեր ծրագրերի ու ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել մեր կայքէջում՝ **socalgas.com**:

ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵԼ ՄԵԶ

Հաճախորդների հետ կապի կենտրոն

Եթե օգնության կարիք ունեք, այցելեք **socalgas.com** կամ զանգահարեք մեզ այս հեռախոսահամարներից մեկով.

- **Շուրջօրյա արտակարգ իրավիճակներին արձագանքման գիծ.** 1-888-427-1345
- **Բնակսպասարկման հաճախորդներ.** 1-888-427-1345
- **Բիզնես հաճախորդներ.** 1-888-427-1345
- **Բնակսպասարկման զեղչեր.** 1-888-427-1345
- **Բազմընտանիք զեղչեր.** 1-888-427-1345

Text Telephone (TDD) / Teletypewriter (TTY)

Լսողության հետ խնդիր ունեցող հաճախորդները, ովքեր չեն կարող օգտվել սովորական հեռախոսից, կարող են զանգահարել մեզ անվճար 1-800-252-0259 հեռախոսահամարով: Այս հատուկ սարքավորումն օգտագործելու մասին տեղեկությունների համար կապվեք Ձեր տեղական հեռախոսային ընկերության հետ:

Բազմալեզու զանգերի կենտրոն

Իսպանախոս ներկայացուցիչներն ու թարգմանչական ծառայությունները Ձեզ հասանելի են շուրջօրյա, շաբաթը յոթ օր: Մեր չինարեն, կորեերեն ու վիետնամերեն խոսող հատուկ ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթի-ուրբաթ օրերին, ժ. առավոտյան 8 -ից մինչև երեկոյան 5 -ը:

Para asistencia en español, llame al	1-800-342-4545
欲知詳情，請洽 免費粵語專線:	1-800-427-1420 (Cantonese)
더 자세한 안내를 받으시려면 다음 한국어 전화로 문의해 주십시오:	1-800-427-0471 (Korean)
欲知詳情，請洽 免費國語專線:	1-800-427-1429 (Mandarin)
Để biết thêm chi tiết bằng tiếng Việt, xin gọi:	1-800-427-0478 (Vietnamese)
Այլ լեզուներ. (մեր «Լեզվի գծի թարգմանիչ» ծառայության միջոցով)	1-888-427-1345

Վճարումներն ուղարկեք.

Southern California Gas Company
P.O. Box C
Monterey Park, CA 91756

Գրեք մեզ.

Southern California Gas Company
Centralized Correspondence Dept. SC 8410
P.O. Box 3150
San Dimas, CA 91773

Այցելեք մեզ առցանց.

socalgas.com

Southern California Gas Company

A Sempra Energy utility®

Glad to be of service.®

© 2011 Southern California Gas Company Էլ. տպագրությունը՝ վերամշակված թղթի վրա, սոյայի հիմքի վրա պատրաստված ներկերով:
Հեղինակային բոլոր իրավունքներն ու ապրանքանիշերը պատկանում են սեփականատերերին:
Չև 3853 1120008 0811